ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/122 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «20» Սեպտեմբերի 2019թ.

2019թ-ի սեպտեմբերի 03-20-ը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/122 ծածկագրով /ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի շոգետուրբինի, գազատուրբինի և կաթսայի օժանդակ սարքավորումների նորոգման աշխատանքներ/ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Գևորգյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի տեխնիկական տնօրեն .
Ա. Ստեփանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԿՏԱ-ի ՀՇԳՑ N 1էն.բլոկի նորոգումների գծով պետի տեղակալ.
Ա. Թագայան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ ՆՆԱԲ-ի պետ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի չորս անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արկադի Գևորգյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/122 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:

2. ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/122 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/122 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/122 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. **ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/122** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած Էներգոնորոգգարանտ ՓԲԸ-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին,բացառությամբ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում կան որոշակի անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Ըստ հրավերի պահանջվում են վարպետներ՝ 3 հոգի, մասնակցի կողմից որպես վարպետ հավելված 3.1-ով ներկայացրել է Արմեն Մնացականյանը, սակայն վերջինս ըստ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի հանդիսանում է տեղամասի պետ:
- Մասնակցի կողմից ներկայացված հավելված 3.1-ում սահմանված է, որ ներկայացվում է **6** հոգի **5-րդ** կարգի փականագործ՝ (Գրիգոր Կարապետյան, Վահրամ Ավետիսյան, Սամվել Մուսայելյան, Սարգիս Ավետիսյան, Վահան Ազիզյան, Արմեն Սամսոնյան), սակայն ներկայացվել են միայն երեք աշխատակցի փաստաթղթեր: Սարգիս Ավետիսյանի, Վահան Ազիզյանի և Արմեն Սամսոնյանի հրավերով պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը բացակայում են:

- Մասնակցի կողմից ներկայացված հավելված 3.1-ում սահմանված է որ ներկայացվում է **2** հոգի՝ **3**-րդ կարգի փականագործ (Ազատ Խաչատրյան, Գարիկ Պողոսյան), սակայն ներկայացվել են 6 աշխատակիցների փաստաթղթեր (Ազիզյան Վահան, Կարապետյան Արթուր, Խաչատրյան Ազատ, Նահապետյան Վարդան, Պողոսյան Գարիկ, Սամսոնյան Արմեն):
- Մասնակցի կողմից ներկայացված հավելված 3.1-ում՝ որպես 4-րդ կարգի փականագործ նշված չէ Սարգիս Ավետիսյանի անվանումը, սակայն վերջինիս փաստաթղթերը ներկայացված են, ինչպես նաև հավելված 3.1-ում Արթուր Կարապետյանը սահմանված է որպես՝ 4-րդ կարգի փականագործ, սակայն վեջինիս փաստաթղթերը բացակայում են :

Որոշվեց՝

1. Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն: Նիստը կասեցնել երեք աշխատանքային օրով:
2. Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել Էներգոնորոգգարանտ ՓԲԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- Էներգոնորոգգարանտ ՓԲԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը և լրացրել բացակայող փաստաթղթերը:

Որոշվեց՝

1. Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/122 ծածկագրով գնմանն ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) Էներգոնորոգգարանտ ՓԲԸ՝ բավարար"

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

2. ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/122 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-19/122 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել Էներգոնորոգգարանտ ՓԲԸ-ին:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գևորգյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ստեփանյան _____

Ա. Թագայան _____

Ա. Պետրոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան